«Շտիգեն» ՍՊԸ
Հայաստան, Երևան,
Դ. Անհաղթ 23, 6-րդ տարածք
Հեռ. +374 11 23 00 23
Կայք. www.shtigen.com

Shtigen LLC
23, 6th area D. Anhaght
Yerevan, Armenia
Tel: +374 11 23 00 23
Web: www.shtigen.com

«ՇՏԻԳԵՆ» ՍՊԸ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

Պատրաստման ամսաթիվ՝ 03 հունիսի 2026թ.

1. Ընդհանուր տեղեկություններ

Սույն կառավարման մարմնի տարեկան զեկույցը կազմվել է «ՇՏԻԳԵՆ» ՍՊԸ-ի կողմից՝ համաձայն ՀՀ Կենտրոնական բանկի «Ազդագիր և հաշվետու թողարկողների հաշվետվություններ» Կանոնակարգ 4/04-ի 18-րդ գլխի 41-րդ կետի պահանջների:

«ՇՏԻԳԵՆ» ՍՊԸ-ն հանդիսանում է պարտատոմսերի հաշվետու թողարկող և իրականացնում է գործունեություն վերականգնվող էներգետիկայի, արևային համակարգերի նախագծման, կառուցման և ինժեներական ծառայությունների ոլորտներում:

2. Կառավարման մարմին և պատասխանատու անձինք

Հայկ Շեկյան՝ տնօրեն, պատասխանատու է ընկերության օպերացիոն և ռազմավարական կառավարման համար:

«Շտիգեն» ՍՊԸ 2025թ. կառավարման մարմինը կազմված է միանձնյա տնօրենից, ով հանդիսանում է **Հայկ Շեկյանը**: Վերջինիս լիազորությունների շրջանակը ներառում է ընկերության ընդհանուր օպերացիոն և ռազմավարական կառավարումը:

Ֆինանսական հաշվետվություններին կազմման համար պատասխանատու անձն է ընկերության ֆինանսական տնօրենը: Այս պաշտոնը զբաղեցնում է **Սերգեյ Մարությանը**: Ֆինանսական հաշվետվությունները հաստատում են ընկերության տնօրենի և ֆինանսական տնօրենի կողմից: Վերջինիս լիազորությունները ներառում են ընկերության ֆինանսական կառավարման, լիկվիդայնության ապահովման, հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացները:

3. Ֆինանսական հաշվետվությունների կազմման հիմքը

2025 թվականի համախմբված ֆինանսական հաշվետվությունները կազմվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (IFRS) համաձայն: Հաշվետու տարվա ընթացքում հաշվապահական քաղաքականություններում կամ կիրառված գնահատումներում էական փոփոխություններ չեն կատարվել:

4. Ֆինանսական արդյունքների և բիզնեսի զարգացման վերլուծություն

2025 թվականը Խմբի համար եղել է կառուցվածքային փոփոխությունների և շուկայական վերադասավորումների տարի:

Ստրև ներկայացված են հիմնական համախմբված ֆինանսական ցուցանիշները:

- Ընդհանուր ակտիվներ՝ 2,508 մլն դրամ
- Ընդհանուր պարտավորություններ՝ 3,203 մլն դրամ
- Սեփական կապիտալ՝ (695) մլն դրամ
- Համախմբված հասույթ՝ 3,793 մլն դրամ
- Տարվա վնաս՝ (515.7) մլն դրամ
- Դրամական միջոցներ տարեվերջին՝ 118.8 մլն դրամ

2025 թվականին Հայաստանի վերականգնվող էներգետիկայի շուկայում տեղի ունեցած էական փոփոխությունները և արևային էներգիայի մանրածախ շուկայի սուբսիդավորվող հատվածի կրճատումը ազդեցություն են ունեցել ոլորտի բոլոր մասնակիցների վրա:

Այս պայմաններում իրականացվել է «Էներէքս» ՓԲԸ-ում մասնակցության մասնակի և հետագայում ամբողջական վաճառք: Գործարքները պայմանավորված են եղել ոլորտում տեղի ունեցած էական փոփոխություններով և նպատակ են հետապնդել կարգավորել Խմբի իրացվելիությունը, բարելավել ֆինանսական դիրքը և ապահովել ֆինանսական ճկունությունը:

5. Դրամական հոսքեր և ֆինանսական վիճակ

2025 թվականի ընթացքում դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճը կազմել է 48.3 մլն դրամ, իսկ տարեվերջյան մնացորդը՝ 118.8 մլն դրամ: Ղեկավարությունը շարունակել է իրացվելիության և պարտավորությունների կառավարման մշտադիտարկումը:

6. Գործարար միջավայր, հիմնական ռիսկեր և անորոշություններ

2025 թվականը վերականգնվող էներգետիկայի ոլորտի համար եղել է էական փոփոխությունների տարի: Հայաստանի Հանրապետությունում արևային էներգետիկայի ոլորտում իրականացված կարգավորիչ փոփոխությունները, մասնավորապես՝ արևային էներգիայի մանրածախ շուկայի սուբսիդավորվող

հատվածի էական կրճատումը, հանգեցրել են շուկայի ընդհանուր ակտիվության նվազման և արևային կայանների նկատմամբ պահանջարկի զգալի անկման:

Նշված փոփոխությունները կրել են համակարգային և ոլորտային բնույթ և ազդեցություն են ունեցել շուկայի բոլոր մասնակիցների վրա: Ղեկավարության գնահատմամբ՝ 2025 թվականի ընթացքում Խմբի հասույթի նվազման հիմնական պատճառներից մեկը եղել է հենց շուկայի պահանջարկի կրճատումը և ոլորտում ներդրումային ակտիվության նվազումը:

Խմբի գործունեության վրա ազդեցություն ունեցող հիմնական ռիսկերը ներառում են.

Շուկայական և ոլորտային ռիսկ

Արևային էներգետիկայի ոլորտում պետական աջակցության մեխանիզմների փոփոխությունը, սուբսիդավորման ծրագրերի կրճատումը և վերջնական սպառողների ներդրումային ակտիվության նվազումը կարող են շարունակել ազդել արևային կայանների նկատմամբ պահանջարկի վրա: Միաժամանակ, վերականգնվող էներգետիկայի շուկան շարունակում է գտնվել վերափոխման փուլում, ինչը ստեղծում է ինչպես ռիսկեր, այնպես էլ նոր հնարավորություններ:

Ֆինանսական և վարկային ծանրաբեռնվածության ռիսկ

Խումբը գործունեության ընթացքում ներգրավել է զգալի վարկային և փոխառու ֆինանսավորում, որի արդյունքում ֆինանսական արդյունքների վրա էական ազդեցություն ունեն պարտքային բեռը և դրա սպասարկման ծախսերը: Դրամական հոսքերի փոփոխությունները կամ ֆինանսավորման պայմանների վատթարացումը կարող են բացասաբար ազդել Խմբի ֆինանսական կայունության վրա: Այդ նպատակով ղեկավարությունը նախաձեռնել է վարկային պարտավորությունների վերակառուցման գործընթաց և իրականացնում է ֆինանսական կայունության վերականգնման միջոցառումներ:

Կարգավորիչ և պետական քաղաքականության ռիսկ

Վերականգնվող էներգետիկայի ոլորտի զարգացումը զգալիորեն կախված է պետական քաղաքականությունից, խթանման ծրագրերից և կարգավորող միջավայրից: Ոլորտի նկատմամբ պետական քաղաքականության փոփոխությունների դանդաղ տեմպերը կամ ներդրումային միջավայրի բարելավման միջոցառումների ուշացումը կարող են

սահմանափակել ոլորտի աճի հնարավորությունները և ազդել նոր նախագծերի իրականացման վրա:

Իրացվելիության ռիսկ

Շուկայի փոփոխությունների և պարտքային բեռի պայմաններում իրացվելիության ապահովումը շարունակում է մնալ ղեկավարության առաջնային ուշադրության կենտրոնում: Այս ռիսկի նվազեցման նպատակով իրականացվել են ակտիվների օպտիմալացման, ֆինանսավորման ներգրավման, ծախսերի կրճատման և դրամական հոսքերի կառավարման միջոցառումներ:

Գործառնական ռիսկեր

Խումբը մշտապես վերահսկում է մատակարարման շղթաների, գործընկերների, նախագծերի իրականացման և մարդկային ռեսուրսների հետ կապված ռիսկերը՝ ապահովելու ընթացիկ գործունեության արդյունավետությունը և նախագծերի ժամանակին իրականացումը:

Ղեկավարությունը պարբերաբար վերանայում է ռիսկերի կառավարման մոտեցումները և իրականացնում համապատասխան միջոցառումներ՝ շուկայի փոփոխվող պայմաններին արագ արձագանքելու և Խմբի երկարաժամկետ կայուն զարգացումն ապահովելու նպատակով:

7. Անընդհատ գործունեության գնահատում

Ղեկավարությունը մշակել և իրականացնում է գործողությունների ծրագիր՝ ուղղված շահութաբերության և դրամական հոսքերի կայունության վերականգնմանը: <u>Հիմնական ուղղություններից կարելի է նշել.</u>

(ա) պարտքի կարգավորում. 2026 թվականի մայիսի 12-ին դատարանը հաստատել է Մասրիկ-1 նախագծի գլխավոր կապալառուի՝ «ՉԱՅՆԱ ԱՐՄԵՆԻԱ ԷՆԺԻՆԵՐԻՆԳ» ՍՊԸ հետ կնքված հաշտության համաձայնագիրը: Համաձայնագրի պայմանների համաձայն՝ Խումբը ստացել է 39 նլն ՀՀ դրամ, իսկ մնացած մասը շուրջ 109 մլն ՀՀ դրամ պետք է մարվի մինչև 2026 թվականի օգոստոսի վերջը,

(բ) պարտքի վերակառուցում. 2026 թվականի երկրորդ եռամսյակում համաձայնեցման փուլում է գտնվում խոշոր վարկատու բանկերի նկատմամբ վարկային պարտավորությունների վերակառուցումը՝ համապատասխանեցնելով մարման գրաֆիկը վերանայված դրամական հոսքերին,

(գ) ծախսերի օպտիմալացում. Աշխատավարձի ֆոնդի կրճատում մոտավորապես 60%-ով և առևտրային և վարչական ծախսերի կրճատում: Ծախսերի կրճատումը պայմանավորված է թե՛ Խմբի բիզնես գործընթացների վերանայման արդյունքում արդյունավետության բարձրացմամբ, թե՛ ծախսերի ուղղակի կրճատմաբ,

(դ) կապիտալատար նախագծերի կասեցում. 80 ՄՎտ հզորությամբ հողմային էլեկտրակայանի նախագծի զարգացման աշխատանքները կասեցվել են, 2025 թվականի դեկտեմբերից «Շտիգեն Վենչուրս» ՓԲԸ գործունեությունը ժամանակավորապես դադարեցրել է գործունեությունը. Վրաստանում գործունեության շրջանակը վերանայվում է,

(ե) ֆինանսավորման ներգրավում. Խումբը գտնվում է կապիտալի և փոխառու ֆինանսավորման ներգրավման գործընթացում՝ շրջանառու կապիտալի համալրման և համալիր նախագծերի (արևային էներգիա, էներգիայի կուտակման համակարգեր, ջերմային պոմպեր, ճարտարագիտական ծառայություններ) մշակելու նպատակով,

(ե) սեփական կապիտալի վերականգնում. Մայր ընկերության միակ մասնակիցը քննարկում է Ընկերության լրացուցիչ կապիտալիզացիայի հարցը :

Հաշվի առնելով այս միջոցառումները, ղեկավարությունը կարծում է, որ Խումբն ունի բավարար ֆինանսական միջոցներ և իրատեսական հնարավորություն՝ շարունակելու գործունեությունը կանխատեսելի ապագայում: Հետևաբար, այս ֆինանսական հաշվետվությունները կազմվել են գործունեության շարունակականության հիմունքներով:

8. Կարևոր դեպքեր

2025 թվականին և մինչև 02.06.2026թ. տեղի ունեցած կարևոր իրադարձություններից են՝

- «Էներէքս» ՓԲԸ բաժնետոմսերի մասնակի վաճառքը և դեկոնսոլիդացիան
- 22.05.2026թ. մնացած բաժնետոմսերի ամբողջական վաճառքը
- ֆինանսավորման ներգրավման և վերակազմավորման միջոցառումները
- «Մասրիկ-1» նախագծի հաշտության համաձայնագրի հաստատումը:
- 2025թ. սկսել և 2026թ. առաջին կեսին ավարտվել է Վրաստանի Ռուսթավի քաղաքում 23.9 ՄՎտ հզորությամբ արևային կայանի նախագծումը և կառուցումը:

9. Կապակցված կողմերի հետ հարաբերություններ

2025 թվականի ընթացքում իրականացվել են կապակցված կողմերի հետ գործարքներ բնականոն բիզնես գործունեության շրջանակներում: Ղեկավար անձնակազմի վարձատրությունը կազմել է 45.9 մլն դրամ:

10. Հետագա զարգացման հնարավոր նկարագիրը

Խմբի ռազմավարությունը կենտրոնացած է արևային էներգետիկայի, էներգիայի կուտակման համակարգերի, ջերմային պոմպերի և ճարտարագիտական ծառայությունների զարգացման, ինչպես նաև ֆինանսական կայունության վերականգնման ուղղությամբ:

11. Պատասխանատու անձանց հայտարարություն

Սույն կառավարման մարմնի տարեկան զեկույցը պատրաստվել է ղեկավարության լավագույն գիտելիքների և համոզմունքների հիման վրա:

Ղեկավարության գնահատմամբ՝ սույն զեկույցը և 2025 թվականի համախմբված ֆինանսական հաշվետվություններն ու դրանց վերաբերյալ անկախ աուդիտորի եզրակացությունը միասին ապահովում են «ՇՏԻԳԵՆ» ՍՊԸ և Խմբի գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի, հիմնական ռիսկերի և զարգացման հեռանկարների հավասարակշռված և համակողմանի ներկայացումը:

«ՇՏԻԳԵՆ»
«ШТИГЕН»
«SHTIGEN»
01574905

Հայկ Շեկյան
Տնօրեն

Սերգեյ Մարության
Ֆինանսական տնօրեն